Poème **ՏԽՐՈՒԹՅՈՒՆ** (1908) (Վահան Տերյան, 1885-1920)

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիկ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին.-
Ծաղիկների մեջ այս անուրջ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

Exercices de grammaire

I. Dans le texte suivant, relevez les verbes, trouvez leur participe infinitif, relevez ceux comportant un suffixe, indiquez leur mode, temps et voix :

Սարի գագաթին մի թասաձև լիճ կար, որին տեղացիները ծով էին ասում: Դրա համար էլ այդ լեռը կոչվում էր Ծովասար: Ամռանը, երբ ջուրը պակասում է, լիճը ստանում է կիսալուսնի ձև: Այդ ծովակի շուրջը բազմագույն և բազմատեսակ ծաղիկներ են բուսնում, որոնցով հիանում է ամենայն արարած: Թամոն Ասատուրին տարավ լճի մոտ և ցույց տվեց նրա եզրին դրված մի սալաքար, որի վրա, ըստ ավանդության, Դավիթը խավարծիլ է կերել լողանալուց առաջ: Նրանք նստեցին այդ միևնույն քարին և, Դավթին հիշելով, կեղևեցին ու կերան իրենց քաղած դալար խավարծիլները:

Երբ հանգստացան, Թամոն կանգնեց ու երկու ձեռքով փորը պահած, ուժեղ սուլեց: Այդ ազդանշանի վրա հարյուրավոր վայրենացած այծեր, որ մինչև այդ անտեսանելի որոճում էին լճափի բարձրահասակ ծաղիկների ու քարերի ստվերներում, ոտքի ելան և խրտնած վազեցին լճի եզերքով: Նրանց պատկերը ջրի մեջ արտացոլվելով մի զմայլելի տեսարան ստեղծեց: Հովիվը կանգնեց սալաքարին և սկսեց ակնապիշ դիտել հրաշալի պատկերը:

(Խաչիկ Դաշտենց)

II. Trouvez le participe infinitif des verbes factitifs suivants :

դադարեցնել, լռեցնել, երջանկացնել, ծաղկեցնել, դժվարացնել, հեշտացնել, հագցնել, սովորեցնել, փայլեցնել, կանգնեցնել, խորացնել, փոքրացնել

III. Conjuguez les verbes à la voix passive, au passé simple, puis mettez les phrases à la voix active

1. Գետինը տեղ-տեղ (պատռել) երկրաշարժից: (պատռել = déchirer)
2. Դաշտերը (ծածկել) ձյունով:
3. Փոսերը (լցնել) անընդհատ տեղացող անձրևով: (տեղալ = tomber, pleuvoir)
4. Արմենակը (զրկել) խաղին մասնակցելու իրավունքից: (զրկել = priver)
5. Մենք (հրավիրել) ճաշի:
6. Երկաթը (ծռել) արկղի ծանրությունից: (ծռել = tordre ; արկղ = caisse)
7. Շշի բերանը (բացել) ներքին ճնշումից: (ճնշում = pression)